ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1025-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«Սույն գլխով նախատեսված կանոնները չեն տարածվում «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հարաբերությունների նկատմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 մասով.

«4.1. Սույն օրենքը չի տարածվում «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով նախատեսված հարաբերությունների նկատմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

51) **ապահովագրական փաթեթում ներառված դեղ՝** արտահիվանդանոցային պայմաններում բուժման ենթակա հիվանդությունների կամ վիճակների դեպքում բուժօգնության և քրոնիկ հիվանդությունների և վիճակների շարունակական (դիսպանսեր) հսկողության նպատակով «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին հաապատասխան ապահովագրված անձին տրամադրվող, Լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկում ներառված դեղ.

52) **ապահովագրական փաթեթում ներառված դեղի հենակետային գին՝** ապահովագրական փաթեթի շրջանակում դեղի ձեռքբերման՝ սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված ելակետային գին.

53) **ապահովագրական փաթեթում ներառված դեղի հատուցման գին՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ապահովագրական փաթեթում ներառված դեղի հենակետային գնի նկատմամբ հաստատված հավելյալ չափի կիրառման արդյունքում ստացվող դրամական միավոր.

54) **ապահովագրական փաթեթում ներառված դեղի հատուցման առավելագույն չափ՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ապահովագրական փաթեթում ներառված դեղի հատուցման առավելագույն չափ՝ դրամական արտահայտությամբ.

55) **ապահովագրական փաթեթում ներառված դեղերի ցանկ՝** առողջապահության բնագավառի պետական կառավարման Լիազոր մարմնի կողմից հաստատած ցանկ, որտեղ սահմանվում են ապահովագրական փաթեթում ներառված դեղերի համընդհանուր անվանումը, դեղաձևը, դեղաչափը, հենակետային գինը, հատուցման չափը և հատուցման առավելագույն չափը:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) բնակչությանը դեղերով ապահովման ոլորտում սոցիալական արդարության երաշխավորումը:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 9. Դեղերի մատչելիության ապահովման պետական համակարգը**

1.Դեղերի մատչելիության ապահովման պետական համակարգը ներառում է Սահմանադրությամբ նախատեսված բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շահառուներին դեղերով ապահովումը, ինչպես նաև ապահովագրական փաթեթի շրջանակում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովագրված անձանց կողմից դեղերի ձեռք բերման՝ ամբողջությամբ կամ մասնակի (համավճար) հատուցումը, սույն օրենքին համապատասխան դեղերի գների կարգավորումը և հսկումը:

Հոդված 10. Ապահովագրական փաթեթի դեղերը

1. Լիազոր մարմինը սահմանում է այն հիվանդությունների և վիճակների ցանկերը, որոնց դեպքում դեղերը տրամադրվելու են առողջության համապարփակ ապահովագրության փաթեթի շրջանակում:

Հոդված 11. Ապահովագրական փաթեթում ներառված դեղերի գների պետական կարգավորումը

1.Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ապահովագրական փաթեթի դեղերի գների պետական կարգավորում: Գների պետական կարգավորումը սույն օրենքի համաձայն ապահովագրական փաթեթում ներառված դեղի ձեռքբերման դեպքում հատուցման և առավելագույն հատուցման չափերի սահմանումն է, որը ներառում է դեղի հենակետային գինը, հատուցման գինը և հատուցման առավելագույն չափը:

2.Ապահովագրական փաթեթում ներառված դեղերի գների պետական կարգավորումն իրականացվում է դեղի համընդհանուր անվանման խմբին և այդ խմբում ընդգրկված առևտրային անվանումներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված դեղերի համար՝ ըստ դրանց դեղաձևի և դեղաչափի:

3.Ապահովագրական փաթեթում ներառված դեղի հենակետային գինը, հատուցման գինը և հատուցման առավելագույն չափերը սահմանում է Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամը՝ ապահովագրական փաթեթում ներառված դեղի հենակետային գնի, հատուցման գնի և հատուցման առավելագույն չափերի հաշվարկման մեթոդաբանության հիման վրա:

4. Օրացուցային տարվա ընթացքում դեղի հենակետային գինը, հատուցման գինը և հատուցման առավելագույն չափը կարող է վերանայվել ոչ ավելի, քան տարեկան երկու անգամ:

5.Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամը իր պաշտոնական ինտերնետային կայքէջում տեղադրում է ապահովագրական փաթեթում ներառված դեղերի հենակետային գնի, հատուցման գնի և հատուցման առավելագույն չափերի վերաբերյալ տվյալները՝ ապահովելով այդ տվյալների մատչելիությունը նաև հաշմանդանություն ունեցող անձանց համար:

6. Ապահովագրական փաթեթի դեղերի գների պետական կարգավորման սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումներն ուժի մեջ են մտնում Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակվելուց հետո ոչ ուշ, քան հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

7.Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ կետերով սահմանված հասկացությունները և սույն հոդվածի դրույթները կիրառելի են ապահովագրական փաթեթի բժշկական պարագաների գների պետական կարգավորման համար՝ հաշվի առնելով «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով բժշկական պարագաներին վերաբերող իրավակարգավորումները:

8.Դեղերի գների և «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով բժշկական պարագաների գների պետական կարգավորման ընթացակարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ. ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

ե. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ.նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող անհատ ձեռնարկատերերը կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար ՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

Հոդված 6. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան ութ ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-275-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածը լրացնել նոր 2.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1 Դոնորը, առողջության համապարփակ ապահովագրության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած բոնուսների կիրառման կարգին համապատասխան, իրավունք ունի ստանալ ապահովագրավճարի բոնուսներ: Առողջության համապարփակ ապահովագրության ոլորտում սահմանված բոնուսների կիրառման համար հիմք հանդիսացող արյան դոնորության իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1) արյան պետական պաշարների ստեղծում, պահպանում և նորացում՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի և բժշկական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո, բացառությամբ արյան դոնորների հետևյալ խմբերի.

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե. ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ.նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար ՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

Հոդված 4. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան ութ ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 7. Երեխայի առողջության պահպանման իրավունքը

«1.Յուրաքանչյուր երեխա առողջության պահպանման և բարելավման ծրագրերի, այդ թվում և առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում ունի առողջության պահպանման իրավունք:»:

Հոդված 2.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Յուրաքանչյուր ոք ունի սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական այլ իրավունքներ:» բառերը.

2) 1-ին մասի 8-րդ կետից հետո լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) օրենքով նախատեսված կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական այլ իրավունքներ:».

Հոդված 2.Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:» բառերով:

Հոդված 3.Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.Հղիության և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնություն և սպասարկումը կնոջը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 4.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո, բացառությամբ՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ.զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ.Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե.ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ. նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

3) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար համար՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

Հոդված 5. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան ութ ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտությունը իրականացվում է առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Թմրամոլությամբ հիվանդները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս օգտվում են պացիենտների, ինչպես նաև ապահովագրված անձանց իրավունքներից՝ քաղաքացիների առողջության պահպանման, ներառյալ առողջության համապարփակ ապահովագրության ոլորտը կարգավորող օրենսդրության համապատասխան:

7. Պետությունն առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում թմրամոլությամբ հիվանդներին երաշխավորում է համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում:»:

-**Հոդված 3.** Օրենքի 50-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 50.Թմրամոլությամբ հիվանդների բժշկական դիտարկումը և հաշվառումը»

1. Թմրամոլությամբ հիվանդների բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո, բացառությամբ.

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ.Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե.ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար ՝

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար ՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ. նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար համար՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պետությունը երաշխավորում է՝ Սահմանադրությամբ նախատեսված բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնության և սպասարկման տրամադրումը՝ մարդասիրության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:».

2) 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում հատուցման ենթակա անհետաձգելի հոգեբուժական օգնության և սպասարկման, ինչպես նաև հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնության և սպասարկման ծառայությունների, դեղերի և բժշկական պարագաների տրամադրումը.

2) օրենքով սահմանված կարգով հոգեբուժական փորձաքննության բոլոր ձևերի իրականացումը, ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության իրականացումը, անձի ֆունցիոնալության գնահատումը:»:

3) 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«4.Հոգեբուժական կազմակերպությունները հոգեբուժական օգնությունը և սպասարկումը իրականացնում են Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի հետ կնքած պայմանագրերով որոշված հոգեբուժական բժշկական և հարբժշկական օգնության և սպասարկման տեսակների և ծավալների շրջանակներում:

5.«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալների և լրացուցիչ ծառայությունների մեջ չընդգրկված հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման տեսակները, հարբժշկական ծառայությունները իրականացվում են վճարովի հիմունքներով: Հոգեբուժական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

6.«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան, օտարերկրացիների շտապ և անհետաձգելի հոգեբուժական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալի շրջանակում:».

4) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) լիազոր մարմնին՝ օրենքով նախատեսված իր լիազորությունների իրականացման համար.»

2) 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-րդ, 2.2-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամին՝ օրենքով նախատեսված իր լիազորությունների իրականացման համար.

2.2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված անձի ֆունկցիոնալության գնահատումն իրականացնելու համար:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո, բացառությամբ՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար ՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ.Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե.ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար.

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ անձանց հետևյալ կատեգորիաների համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ. նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

զ. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

Հոդված 4. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան ութ ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի՝

1)10-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«10.Անժամկետ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձանց առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում երաշխավորվում է ապահովագրական փաթեթ՝ այլ անձանց համար նախատեսված ապահովագրական փաթեթներին համապատասխան:».

2)11-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սահմանել, որ հաշմանդամություն ունեցող անձինք, բացառությամբ անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների, եթե վերջիններս նման ցանկություն չեն հայտնել, մինչև 2027 թվականի հունվարի 1-ը պարտավոր են անցնել ֆուկցիոնալության գնահատում՝ օրենքով սահմանված կարգով առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում ապահովագրական փաթեթ ստանալու համար:

Հոդված 4. Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից, իսկ 3-րդ հոդվածը՝ սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի հավելվածի 2-րդ կետի «մշակում և իրականացնում է առողջապահության» բառերից հետո լրացնել «, առողջության համապարփակ ապահովագրության» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ, 10-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետում «պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ, ինչպես նաև այլ պայմաններով» բառերը փոխարինել «առողջության համապարփակ ապահովագրության» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 3-րդ ենթակետով.

«3) Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի կողմից վարվող բազան՝ «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով սահմանված նպատակների համար:»

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) լիազոր մարմնին, ինչպես նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններին՝ վարակիչ, ինչպես նաև քիմիական, ճառագայթային, կենսաբանական գործոններով պայմանավորված հիվանդացության դեպքերում, և լիազոր մարմնի սահմանած առանձին ոչ վարակիչ հիվանդությունների կամ զանգվածային թունավորումների կամ դրանց սպառնալիքի դեպքերում.».

2) 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1)Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամին՝ «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի և բժշկական կազմակերպությունների, ինչպես նաև դեղատների միջև՝ հօգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրերով նախատեսված ապահովագրական փաթեթի ծառայությունների ընթացքի և որակի ստուգման, ինչպես նաև մշտադիտարկումներ, դիտարկումներ աշխատանքներ իրականացնելիս.».

3) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնին՝ ֆունկցիոնալության առաջնակի կամ կրկնակի գնահատում կամ վերագնահատում կամ բժշկասոցիալական փորձաքննություն կամ վերափորձաքննություն իրականացնելու նպատակով.».

4) 12-րդ կետից հետո լրացնել նոր 13-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«13. Պետական վերահսկողական ծառայությանը՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում վերահսկողություն իրականացնելիս»:

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Յուրաքանչյուր ոք, սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան, իրավունք ունի ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ առողջության պահպանման և բարելավման ծրագրերի, այդ թվում օրենքին համապատասխան առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում շրջանակներում:»:

Հոդված 6. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Յուրաքանչյուր երեխա առողջության պահպանման և բարելավման ծրագրերի, այդ թվում օրենքին համապատասխան առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում իրավունք ունի ստանալու բժշկական օգնություն և սպասարկում:»

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություն ունեցող յուրաքանչյուր ոք առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալու բժշկական օգնություն և սպասարկում օրենքով նախատեսված կարգով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալի շրջանակում» բառերով:

Հոդված 8. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում՝ առողջության համապարփակ ապահովագրության, իսկ դրա բացակայության դեպքում պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Կառավարության սահմանած կարգով:».

2) 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Այն դեպքերում, երբ առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի միջոցները բավարար չեն արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնելու համար հիմնադրամը Լիազոր մարմնի միջոցով դիմում է Կառավարությանը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնելու համար».

3) 2-րդ մասում «պետության կողմից երաշխավորված» բառերը փոխարինել «առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում» բառերով:

4) 3-րդ մասի 1-ին կետում «պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով.» բառերը փոխարինել «առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում» բառերով:

5) 4-րդ մասում «պետության կողմից երաշխավորված» բառերը փոխարինել «առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում» բառերով:

Հոդված 9. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11) հիվանդանոցային պայմաններում պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուց առաջ, իսկ անգիտակից կամ կյանքին սպառնացող վիճակում գտնվող պացիենտներին գիտակցության գալուց կամ կյանքին սպառնացող վտանգի վերացումից հետո իրազեկել պացիենտի իրավունքների (ներառյալ՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի) և պարտականությունների մասին: Առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում բժշկական օգնություն և

սպասարկում ստացողներին, նվազագույն ծառայությունների ծավալ կամ բժշկական գնության և սպասարկման լրացուցիչ ծառայություններ ստացողներին կամ նրա օրինական ներկայացուցչին նրանց համար մատչելի ձևաչափով տրամադրվում է իրազեկման թերթիկ, իսկ վճարովի բժշկական օգնություն և սպասարկում ստացողների հետ կնքվում են ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրեր.»:

Հոդված 10. Օրենքի 39-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8) ֆունկցիոնալության գնահատում:».

2) 8-րդ մասից հետո լրացնել նոր՝ 9-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ.

«9.Անձի ֆունկցիոնալության գնահատումը իրականացվում է համաձայն «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի:»:

Հոդված 11. Օրենքի 44-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 44. Պետության բյուջետային նպատակային ֆինանսավորումը**

«1. Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան:

2. Պետությունն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան իրականացնում է առողջության համապարփակ ապահովագրության՝ իր պարտավորությունների շրջանակում նախատեսված ապահովագրավճարների վճարումը: Առողջության համապարփակ ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով, առողջության համապարփակ ապահովագրության ոլորտը կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով:

3. Պետությունն Հայաստանի Հանրապետության օրենդրության և առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան ապահովում է կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված բժշկական օգնության և սպասարկման առանձին տեսակների բնականոն գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

4. Կառավարությունը սահմանում է առանձին բժշկական արտադրատեսակների կենտրոնացված կարգով ձեռքբերման ու բաշխման կարգը:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո, բացառությամբ՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ.Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե.ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ. նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կատեգորիաների համար՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

Հոդված 13. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ ժե1)-րդ կետով.

«ժե1) առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարը.»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «շարունակել» բառից հետո լրացնել «առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարների» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ է) ենթակետով.

«է) առողջության համապարփակ ապահովագրավճար.»:

Հոդված 2. Օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մասով՝

«6. Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամը.»:

Հոդված 3. Օրենսգրքի 159-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5.Օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարի վերադարձն իրականացվում է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 147-րդ հոդվածը 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43-րդ կետով՝

«43)ֆիզիկական անձի համար վճարված առողջության համապարփակ ապահովագրավճարները:»

Հոդված 5. Օրենսգրքի 147.1 հոդվածի 1-ին մասից հանել «առողջապահության» բառը և լհոդվածը ռացնել նոր՝ 3-րդ մասով՝

«3. Առողջության համապարփակ ապահովագրության վճարը համարվում է սոցիալական ծախս միայն «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:»

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո, բացառությամբ՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ.Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե.ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ. նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

Հոդված 7. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան ութ ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47.1 հոդվածում 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում հօգուտ ապահովագրված անձի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից բժշկական օգնության և սպասարկման համար օրենքով չնախատեսված վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո, բացառությամբ՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 և առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

բ. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

գ.զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց օրենքով նախատեսված ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

դ.Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.

ե.ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձը (ընտանիքը)՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում.

2) 2025 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. 63 և բարձր տարիքի անձինք.

3) 2026 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա.վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք.

բ. նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողներ, շահաբաժիններից, փոխառություններից, ռոյալթիներից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

4) 2027 թվականի հունվարի 1-ից՝ հետևյալ կատեգորիաների համար՝

ա. անժամկետ հաշմանդամություն ունեցող, հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձինք.

բ. մինչև երկու տարեկան երեխա խնամող կանայք.

գ. ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող խնամակալներից մեկը.

դ. ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող.

ե. սույն հոդվածի 3-րդ կետի ա., բ., գ. պարբերություններով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբում ընդգրկված անձին «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի 23-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման լրացուցիչ ծառայություններ» բառերով.

2) 2-րդ մասում «պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման լրացուցիչ ծառայություններ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» 2002 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՕ-411-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում « անվճար բժշկական օգնություն և սպասարկում» բառերը փոխարինել «բժշկական օգնություն և սպասարկում՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում» բառերով.

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է բժշկական օգնություն և սպասարկում՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում:

2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին կարող են տրամադրվել սպորտ-առողջարարական ճամբարների, հանգստյան տների ուղեգրեր՝ պետական և համայնքային բյուջեներից այդ նպատակով նախատեսված միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-267 օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վետերաններն իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և բժշկական սպասարկում՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-247-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ, ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ».

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում «եկամտային հարկի» բառերից առաջ լրացնել «առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի» բառերը:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքում,» բառերից հետո լրացնել «Առողջության համապարփակ ապահովագրության մասին»,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «եկամտային հարկի պարզեցված հաշվարկ» բառերից հետո լրացնել «, Առողջության համապարփակ ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված անձնավորված հաշվարկ» բառերը:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5) Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի բնականոն գործունեության և ապահովագրված անձանց իրավունքների իրականացման ապահովումը:»:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «եկամտային հարկ» բառերից առաջ լրացնել «առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճար,» բառերը:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «եկամտային հարկի» բառերից առաջ լրացնել «առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի,» բառերը:

Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին ենթակետը լրացնել նոր՝ թ. պարբերությամբ՝ «թ.առնչությունը առողջության համապարփակ ապահովագրավճար կատարելուն».

2) 2-րդ ենթակետի գ.պարբերության մեջ «եկամտային հարկի» բառերից հետո լրացնել «,առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի» բառերը, իսկ «կուտակային հատկացումների» բառերից հետո լրացնել «և ապահովագրավճարի սուբսիդավորման» բառերը.

3) 2-րդ ենթակետի ե.պարբերության մեջ «կուտակային վճարի» բառերից հետո լրացնել «առողջության համապարփակ ապահովագրավճարի» բառերով.

4) 3-րդ ենթակետի ե.պարբերությունից հետո լրացնել նոր զ. և է. պարբերություններ հետևյալ բովանդակությամբ.

«զ.ձեռնարկատիրական գործունեությունից (նոտարական գործունեությունից) ստացված՝ առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված ապահովագրավճարի չափը և վճարելու օրը, ամիսը, տարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար

(օգտին) փոխանցված առողջության համապարփակ ապահովագրավճարի սուբսիդավորման չափը, սուբսիդավորման գումարները փոխանցելու օրը, ամիսը և տարին».

«է. առնչությունը առողջության համապարփակ ապահովագրավճար կատարելուն».

5) 4-րդ ենթակետի դ. պարբերությունից հետո լրացնել նոր ե. պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«ե. առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված ապահովագրավճարի չափը և վճարելու օրը, ամիսը, տարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար (օգտին) փոխանցված առողջության համապարփակ ապահովագրավճարի սուբսիդավորման չափը, սուբսիդավորման գումարները փոխանցելու օրը, ամիսը և տարին»

6) 5-րդ ենթակետի գ. պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր գ1. պարբերություն.

«գ1. որպես ինքնազբաղված անձ ստացած՝ առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած ապահովագրավճարի չափը, ապահովագրավճարը վճարելու օրը, ամիսը և տարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար (օգտին) փոխանցված առողջության համապարփակ ապահովագրավճարի սուբսիդավորման չափը, սուբսիդավորման գումարները փոխանցելու օրը, ամիսը և տարին.»:

7)Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ ենթակետով.

«7)վարձակալական վճար, շահաբաժին, ռոյալթի և այլ պասիվ եկամուտ ստացող անձանց դեպքում.

ա. առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած ապահովագրավճարի չափը, ապահովագրավճարը վճարելու օրը, ամիսը և տարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար (օգտին) փոխանցված առողջության համապարփակ ապահովագրավճարի սուբսիդավորման չափը, սուբսիդավորման գումարները փոխանցելու օրը, ամիսը և տարին.»:

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ ենթակետով.

«5) առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամից:».

2) 2-րդ մասի 3-րդ պարբերության «ռեեստրը վարողը,» բառերից հետո լրացնել «և առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամը» բառերը.

3) 4-րդ մասում «պետական կառավարման մարմինների» բառերից հետո լրացնել «, Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի» բառերը:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «եկամտային հարկի» բառերից հետո լրացնել «առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի» բառերը:

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «(եկամտային հարկի),» բառերից հետո լրացնել «վճարված առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի» բառերը.

2)3-րդ մասում «եկամտային հարկի» բառերից հետո լրացնել «և վճարված առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի,» բառերը:

Հոդված 12. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ ենթակետով.

«4) Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամին**».**

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո, բացառությամբ՝

1) 2024 թվականի հուլիսի 1-ից հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձ (ընտանիք).

2) 2026 թվականի հունվարի 1-ից հետևյալ կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար՝

ա. վարձու աշխատողներ, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները.

բ.նոտարներ, անհատ ձեռնարկատերեր, ինքնազբաղված անձինք, աշխատանքների կատարման կամ ծառայությունների վճարովի մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող անհատ ձեռնարկատերեր կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, վարձակալության պայմանագրերի շրջանակներում եկամուտ ստացողների, շահաբաժիններից, փոխառություններից եկամուտ ստացողներ.

գ.անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ.

դ.սույն կետով սահմանված անձանց «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքին համապատասխան փոխկապակցված անձանց համար:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «ձևով» բառից հետո լրացնել «, առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում»:

Հոդված 2.Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1)«Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

2) 5-րդ ենթակետից հանել «բժշկական» բառը:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1)2-րդ մասում «անհրաժեշտության դեպքում՝ բժշկական շարունակական հսկողության և հիվանդանոցային բուժման» բառերը փոխարինել «անհրաժեշտության դեպքում՝ բժշկական օգնություն և սպասարկում՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարիքի գնահատման արդյունքներով անձին տրամադրվում է պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում:».

3)5-րդ մասի 2-րդ կետում «բժշկական օգնություն և սպասարկում» բառերից հետո լրացնել «՝ առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում» բառերը:

4)8-րդ մասի՝

ա.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ստացմանն ուղղված աշխատանքները. ».

բ. ուժը կորցրած ճանաչել 7-րդ կետը:

Հոդված 4.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասում «պետության երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ «կառավարության» բառերը փոխարինել «օրենսդրությամբ» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «Առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի, եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասում ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:» բառերը փոխարինել «Առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի, եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:» բառերով:

Հոդված 3. Օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «Առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի, եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 5-րդ, 28.1-րդ հոդվածի 2-րդ, 28.3-րդ հոդվածի 6-րդ մասերում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի, եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի 2.4-րդ մասում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «Առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի, եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: